ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ (ՀԿ)
SPECIAL TOPIC: HEAVEN (OT)

Եբրայերեն տերմինը (BDB 1029, KB 1559, միշտ ՀՈԳՆԱԿԻ, հայերենում թարգմանված է «երկինք», «երկնակամար», «հաստատություն», «օդ») կարող է վերաբերել մի քանի բաների (այսինքն՝ սկզբնական ստեղծագործության մի շարք երկնակամարների կամ մթնոլորտների).

1. Ծննդոց 1:8-20-ում այն նկատի ունի երկրից վրա տարածված մթնոլորտը, որտեղ ամպերն են շարժվում և թռչունները՝ թռչում:
2. Այս երկնակամարը (տես՝ Ծնն.1:6,20, Ես.40:22, 42:5) երկրագնդից վեր, որտեղից Աստված անձրևն է ուղարկում (այսինքն՝ «երկնքի պատուհանները», տես՝ Ծնն.7:11, 8:2, Սաղմ. 78:23-29, Եսայի 24:18, Մաղ.3:10 կամ «երկնքի ջրամանները», տես՝ Հոբ 38:37): Տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿՐԱԳՆԴԻ ՇՐՋԱՆԱԿԸ</u>:
3. Այս երկնակամարը, որտեղ աստղերն են բնակվում և մոլորակները շարժվում: Այն կարող է վերաբերել ամբողջ ստեղծված տիեզերքին (միլիարդավոր և միլիարդավոր գալակտիկա-ներին): Տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՅՍ ԵՎ ԳԱԼԻՔ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ</u>:
4. Այս երկնակամարից վեր Աստծո բնակատեղին է (այսինքն՝ երրորդ կամ յոթերորդ երկինքը. տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿԻՆՔ</u>): Այն ամենաբարձր երկինքն է (օրինակ՝ 2 Օր.10:14, 3 Թագ.8:27, 30, 32, Սաղմ.2:4, 148:4, Եսայի 66:1):
5. Աստվածաբանական շեշտադրությունը՝
   ա. Աստված ամեն բանի արարիչն է:
   բ. Նա է վերահսկում ստեղծագործությունը (այսինքն՝ լույսն ու խավարը, անձրևն ու երաշտը):
   գ. Նա է ստեղծել և դրել գիշերվա լույսերը (արև, լուսին, աստղեր, մոլորակներ, գիսաստղեր)
   դ. Երկինքները գործածվում են մարդկանց նշանների համար՝
      1) երբ երկրպագել, երբ ցանել (տես՝ Ծնն.1:14)
      2) Նոյին տրված ծիածանը (տես՝ Ծնն.9:12-17)
      3) տրված կամ հետ պահված անձրևը ուխտի հնազանդության դրսևորում (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30)
      4) թագավորներին հայտնություն (տես՝ Դան.6:27)
      5) Մեսիայի հայտնությունը (տես՝ Դան.7:13-14)
      6) նոր դարաշրջանի մասին հայտնությունը (տես՝ Հովել 2:30-31, Գործք 2:19-20)
      7) վերջին օրերի նեղությունները (տես՝ Մարկ.13:24-26, Ղուկ.21:11, 25, Հայտն.15:1)
      8) «նոր երկինքը և նոր երկիրը» Աստծո և մարդկության միջև փոխհարաբերության աստվածաշնչյան նկարագրության վայրն է (այսինքն՝ Եդեմի վերդարձված Պարտեզը, տես՝ Հայտնություն 21)
   ե. Կան իրականության ոլորտներ կամ տիրույթներ՝
      1) երկիր
      2) երկրից վեր
      3) անտեսանելի՝ հրեշտակային (տես՝ Կող.1:16)
      4) Աստծո ներկայությունն ու բնակատեղին
      5) դրանք բոլորն էլ կապված են և վերահսկվում են Նրա կամքով

Կարծում եմ «երկինքն ու երկիրը» խոսքը նկատի ունի այս մոլորակը՝ նկարագրված այնպես, կարծես թե մի մարդ դիտորդ նայում է վերից (այսինքն՝ գործածելով նախանվանաբանական լեզու): Աստվածաշունչը կենտրոնանում է այս մոլորակի վրա: Դրա նպատակն այն չէ, որ տա ամբողջ տիեզերքի մասին հայտնության տեղեկատվություն: